

THE ARARAD,
An Armenian Journal
of
Politics, Science and Literature.
Published
Every Other Thursday,
by
P. M. AYVAD,
Editor and Proprietor,
No. 100 Centre Street, New York.



TO ADVERTISERS.
This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.
Rates of advertising will be found on the fourth page.

ԵՐԿ-ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

— ՄԵՐ ՍԿԶՈՒՆԻՔԸ ԱԶԳԻՆ ՍԿԶՈՒՆԻՔԸ Է, ՄԵՐ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՏԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ — ԱՐԱՐԱՏ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 30, 1876

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆՊՈԼԻՍ 1869. ՆՈՒՒ ԵՐԿ, ՀԻՆՉՍԵՐԹ, ՄԱՐՏ 12 1891. ՆՈՐ ՀԱՏՈՐ Ա. ԹԻԻ NEW VOLUME I NO. 6

ԱԶԳ

Եկեղեցական եւ գեղութեան գործերու վերաբերեալ Հայերէն լեզուա ճանաչմունք, որը երկու մասունքաւի աւելի տեղ չեն բռներ, Թերթիս մէջ ձրի պիտի հրատարակուին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

ՈՒՂԱՔԱՐԱՐ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ
St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish.]
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի որ առաւօտեան ժամերգութիւն կը կատարուի ի վերոյիշեալ Մատարան, ամէն Կիրակէ ժամը 1-50 ին յետ միջառուր:

Ի Դիմաց Հոգաբարձութեան, Հ. ԷԿԵՂԵՑԻ, Փ Մ. ԱՅՎԱՏ, Բարաւոյալ:

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ի ՆՈՒՒ ԵՐԿԻ:
Ընթերցող:

ՀՐԱՏ ՄԵՍՐՈՊ ԲԻՐԻՉԵԱՆ.

Եւրոպայի Կոստանթնուպոլիս 2,50 յետ միջառուր: Ի Կրկն Մատարան (Պրատուէլ և Տանկերովք փողոց) կրօնական Պաշտամունք պիտի կատարուի Հայ լեզուա, ըստ գրութեան Անգղիական Եկեղեցւոյն:

Յարգանքով կը հրաւիրուին ամէն Հայք երկրայ գտնուի և մասնակցել տոյն Պաշտաման:

ՆԵՒՏՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱՃԵԱՆ

Բարաւոյալ:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ

ԱՆԳՂ. ԴԱՍԱՆՍՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏՈՒՄԻՆԻՔ
ՅԵՒԻՓԷՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ:

4707 փողոց, Լէզուիկի թիւ 1 և Բարձր Ավանի ներքո միջուկը, Պաշտօնեայ — Սրբ. Յովհաննէսեան. Դաստիարակութիւն կոկի, յետ միջառուր, ժամը շին, եւ կրօնական Պաշտամունքն ժամը չորսին, Կիրակէ օրեր:

ԱԶԳ

Նիւու Երթի Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն պատիւ ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան, որ Եկեղեցական երաժշտութեան վարժութիւնը տեղի կունենան ամէն Հինգշաբթի գիշեր ժամ 7.30, Ս. Ոսկերեան Մատարան սրահին մէջ, Ուէսթ Յորդ փողոցի և 7րդ Ավանի անկիւնը, Սրահին դուռը 7րդ Ավանի վրայ է: Ամէն ազգայինը սիրով կը հրաւիրուին ներկայ գտնուիլ:

ԿԱԿԾԱՆՔ

Գրեց

Հ. ԷԿԵՂԵՑԻ:

Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գլուխը, որ կը վաճառուի խմբագրութեան ձով հատը 5 աշնթի:

ՊՈԼԿԱՐԱԿԱՆ ԱՆԳՈՒԹԻՒՆՔ

ԵՒ

ՀԱՅԱԿԱՆ ԱՆԳՈՒԹԻՒՆՔ

— 0 —

(Ֆիլատէլիոյ Բիւսմէյըրէ Թարգմանում)

Խորհանք պարգամութեան հիացուցիչ գործը մը աշացա հանդիպեցաւ անցեալ օր: Ասի գիրք մ'էր թրքական Համակրական Հանգանակութիւն, Նորա սկզբնադրութեան, Գործող և Կրթեանց Պատմութիւն մը: Հաւաքեալ Հ. Մէյնուէրինկ Տիւնսման է խմբագրեալ, Ու. Պրոտէլ-Գուց է Լոնտըն 1875, յետագործ, Հեղինակը իւր արամադրութեան ներքէ գտնուած շատ մը երեսներուն մէջ աշխատած է նկարագրելու Ռուսաց և պոլկարաց կողմանէ անպաշտպան թրքաց վրայ գործուած հարստահարութիւնները, և անոնց այս ընթացքը բաղդատած է այն մարգարէութեան հետ որով Անգղիայի Տիկնայք և Պարսկաստանը իրենց հարստութենէն իրենց տագնապեալ թրքաց օգնութեան համար: Ամբողջ գործին մէջ, տողերուն միջև կը կարդացուի սա ջերմ աղօթքը: «Ով Տէր, գոհանամք քեզ ար Անգղիայի երկը և ոչ Ռուսիայի կամ Ռուսկար:»

Օրհնեալ է այն որ կարող է իւր աշաց մէջի գերանը շտեմնել երբ իւր եղբոր աշաց մէջի փոշոյն վրայ կը քարոզէ: Որչափ մեծ որ ըլլայ այդ գերանը այնչինքն մեծ պէտք է ըլլայ մեր հիացումը անոր վրայ որ կարող է զայն շտեմնել: Ուստի ներկայ պարագային մէջ մեր հիացումը անսահման պէտք է ըլլայ: Դրովհետեւ, շատ քիչ քննութիւն պէտք է հասկնալու համար թէ Պոլկարիոյ արիւնջեղութիւնը մեծաւ մասամբ Անգղիոյ խղճամտութեան վրայ կը ծանրանայ:

1875-77 Պոլկարիոյ մէջ պատահած արհաւիրքը երեք աստիճաններու կրնայ բաժնուիլ: ապատմութիւն, ընկճում և փոխարինութիւն:

Եթէ Անգղիա արգիլած չըլլար զՌուսիա Արեւելեան Քրիստոնէից օգնութեան հասնելէ, ամէն բան 1855 ին կարգադրուած պիտի ըլլար և 1875 ի ապստամբութեան տեղի չի պիտի մնար: Պոլկարիա ինքնօրէն եղած պիտի ըլլար, և քաղաքակրթութեան ընթացքին մէջ քան տարի չափած պիտի ըլլար: Փոխանակ ասոր, Պոլկարիոյ արեւելեան ուրիշ Քրիստոնէից հետ մէկտեղ, դարձեալ մղուեցան անհաւատ թրքին տիրապետութեան ներքեւ—որ է տիրապետութիւնն ազգութիւն ինքնայ աղանոց:

1875ին ապստամբութիւնն ծագեցաւ եւ այն ատեն արտաքոյ կարգի բան մը պատահեցաւ: Թրքական կառավարութիւնը ըստ ինքեան առաջարկեց որ խաղաղութիւնն վերահաստատուի եւրոպական կառավարութեանց հսկողութեան ներքեւ: Եթէ այս բանս կատարուէր շատ քիչ արեւն թափած պիտի ըլլար: Բայց

Անգղիա այս անգամ ալ գիտողութիւն ունեցաւ, և զխառնարար իւր ազդեցութեամբ Պոլկարիոյ ի հնազանդութիւն բերուելուն գործը թրքական զօրաց թողուեցաւ, և տառնեկներով դարուն վերջին քառորդը այնպիսի տեսարաններով ներմուծուեցաւ, որուն պատմութեամբ աշխարհ յաւիտեան սարսափահար պիտի մնայ:

Երբ վերջապէս Ռուսիա ի գութ շարժեցաւ իւր տառապեալ մերձաւորաց վրայ, դորա անխուսափելի հետեանքն իրականացաւ: Խորհեցէ՛ք անգամ մը: Հինգ դարերէ ի վեր Քրիստոնէայ Պոլկարի, Կոստուած, Կողբալուած, խաղաղանուած, գանակոծուած, ցամահ եղած, խռովուած էր: Իւր, աղջիկ զատկա, քոյրերուն Միսիւմաններէ առեանգութիւն տեսած էր: Հինգ դարերէ ի վեր իւր այս բաներուն ենթարկուելով գրեթէ վայրենայ մը դարձած էր: Եւ նոյն իսկ իւր աղատուելէ անմիջապէս առաջ անհաւատներն իրենց զայրոյթը կրկնապատկեալ վայրագութեամբ նորա վրայ թափած էին: Եւստի մարգարէի ընտելեան ինչ բան կրնար աղեկալուիլ անիջ երբ իւր եղբոր օգործոր բաղդուի նորա հարստահարիչն ի գետին տապալէ: Ոչ ոք կրնայ ուրանալ որ կառաղի Քրիստոնէին անպաշտպան թրքաց վրայ թափած փոխարինութիւնն սարսափելի էր: Բայց չէ՞ մի որ գրուած է թէ « Եւստի Կոնստնտին Կոստանտին, փոթորիկն պիտի քաղէ: »

Որչափ դիւրաւ այս ամենուն առաջը կրնար առնուիլ, եթէ Անգղիա, իր ըմբոստանէն ետքը թրքական Քրիստոնէայ գաւառաց մէջ Անգղիական վերատեսչութեան ներքեւ գործադրելի բարենորոգման, վրայ պնդել, տալով արեւելեան Քրիստոնէից փոքր մաս մը այն ինքնավարութիւնն որ Անգղիոյ պարձնէ: Եւ այն ատեն ոչ ապստամբութիւն պիտի ըլլար, ոչ ընկճում և ոչ փոխարինութիւն: Եւ արեւելքի մէջ Անգղիոյ գիրքը այսօրու ընէ աւելի զօրաւոր պիտի ըլլար: Եւ փամանակին եղած կարկտան մը ինք հատի փոխարէն է:

Ինչո՞ւ գրել այս ամենը: Անգղիան պարսաւելու համար է: Արտուած մի արասցէ: անցեալն ոչ ոք բաղով կրնայ դարմանուիլ և ոչ պարտաւանջ: Այլ գիմելու համար է Անգղիոյ մարդկութեան և խոհակնութեան որ նա ցոյց տայ այն նախատեսութիւնն Հայաստանի մէջ զոր չի ցուցուց Պոլկարիոյ մէջ: Որովհետեւ այն երրակի արեւան մկրտութիւնն որ լուաց զՊոլկարիա 1875-77 ին կրնայ լուալ Հայաստան 1891 ին: (Նարունակելի)

Դատաւորը գողութեամբ ամբաստանեալ յանցաւորին:

—Ասկէց առաջ երբէք դատաւարութեամբ ես:—
—Լաւ չեմ յիշեր, Տէր իմ, բայց տպաւոր եմ որ Հինգ տարիներէ ի վեր այդ բանն պատահած չէ:—
—Ինչէ՞ն գիտես
—Որովհետեւ բոլոր ժամանակը բանտին մէջ էի:—Լը Բըթի Բիկարո:

ՀԱՐԱՏ ՀԱՐՈՒԹԻՒՆՔ

(Մեր յատուկ Թղթակցէն)

Բալու, փետր. 4, 1891.

Եփրատ գետին ամանց վրայ գտնուող մի քաղաք է Բալու: Թերեւս շատերը տեղեկութիւն ունին այս քաղաքի մէջ գործուած եղեռնագործութեանց և հարստահարութեանց վրայ, որք շատ անգամ կը պատահին մեր Հայ Քրիստոնէայ եղբայր վրայ անգղութ և անտղթ թրքերու և նոցա տրանսկայ ձեռքով: Եւ ահա ուրիշ մի թշուառ տառապանաց լուր մ'ալ: Յունվար ամսուն մէջ (որուն որոշ օրը չենք ուզեր ըսել) մի կէս գիշերուան տեսնելով քաղաքի Հայաց մի փոքրցին մէջ մեծ աղաղակ մի լսուեցաւ: Եւ օգնութիւն, օգնութիւն կը պօռար, զի աւաղակաց խումբ մը Հայու մը տունը մտնելով կուղէին կողոպտել և մարդոց կեանքն ալ վերջացնել, (ինչպէս ուրիշ շատ անգամ յաջողած են այս տեսակ եղեռնագործութեանց մէջ): Դրացիք այս աղաղակը լսելով օգնութեան հասան, իւրաքանչիւր ոք իրեն հետ տանելով մի գործիք: աւաղակները չի համարձակելով դէմ դնել՝ ձգեցին փախան: Հետեւալ օրը կառավարութիւնն այս դէպքը լսելով բոլոր օգնութեան գացող անձինքները և ուրիշ շատ մ'ալ անպարտ դրացիներ տարին բանտարկեցին, (այս անձանց մին ալ Խմբագրացի է) ըսելով թէ դուք յեղափոխական մարդիկներ էք: Տակաւին բանտին մէջ կը հեծեն: Ըսող չկայ, օգնող չկայ, և ոչ ալ մի յոյս արձակուելու: Արդեօք ալ աւելի համարձակութիւն չի պիտի ունենան ռոքագործ իրենց անգլութեամբ տուած չարիքներն կրկնապատկելու: Ահա մեր վիճակը որ ըստ օրէ կը աստիանայ: Մինչև և երբ լուել պիտի պարտաւորուիք, թրքաց Հայոցս վրայ զայրոյթը անտանելի եղած է մեզ: Եւ մեր անմղ եղբարք առանց յանցանքի կամ քննութեան կը բանտարկուին: Բնաւորեւ ապահովութիւն մնացած չէ Հայուն համար և կառավարութեան պաշտօնեայինքն կը չարաչար յայնչափ որչափ աւաղակներէն և ասպատակներէն:

ԱՆԳՂԱԿԱՆ ԲԱՐԱՄԱՍԵՆԻ

ՀԱՅ ԿԱՐԱՔԱԿԱՆ ԵԱՆՑԱՆՈՐԻ

Ի ԹՈՒՐԻՒՆ:

Լոնտըն, փետր. 27, 1891.

Մը. Լեվիդըն Կառուր հարցուց Արտաքին Գործոց Ենթաքարտուղարին թէ այս միջոցիս մեծ թուով Հայեր իւր քաղաքական կառկածի ներքաւտարկուած էին թուրքիոյ զանազան մասանց մէջ, և եթէ այդպէս էր, ինքն տեղեկ էր թէ ինչ էին այն մասնորոշ ամբաստանութիւններն, եթէ երբէք կը կենային այդպիսի ամբաստանութիւնք, որոնցմով այդ մարդոց իւրաքանչիւրն բանտարկուած էին:

Սըր ձէյմս Ֆերկիդըն—Յունվար ամսոյ մէջ ի Կոստանդնուպոլիս աղառ թողուեցան իսկ մը բանտարկեալք: Ասոնք մեծաւ մասամբ անհասներ էին որոց դատաւարան անկաւին աւարտած չէր: Նոյն ամսոյ մէջ իսկ մը Հայեր ձերբակալուած էին Երզրու մի մէջ իւր իւրաքանչիւր ամբաստանուած: Փետրվարի մէջ տեղեկութիւն ընդունուեցաւ թէ Արտաքին վերալեթիւն մէջ Հայեր ձերբակալուած են, յեղափոխական յանձնարմի մի վերաբերած լինելու կապածմանօք: Լուր կայ նաեւ թէ Հայեր ձերբակալուած են Մարաշի, Հաճընի և Քոյսնի մէջ: Ն. Վ. Թագուհւոյն Կառավարութիւնը տեղեկ չէ թէ ինչ մասնորոշ ամբաստանութիւններով այս ամէն անհասները բանտարկուած են:

ԹՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ի ՀԱՅԱՍՏԱՆ:

Մը. Լեվիդըն Կառուր հարցուց նաեւ թէ Ն. Վ. Թագուհու կառավարութիւնը որ և է տեղեկութիւն ստացած էր որ լոյս նետեր Տէյլի Նիւուի փետր. 14 թուականաւ Կոստանդնուպոլսէն ընդունած լրոց վրայ որք կը հաւաստէին թէ թրքական կառավարութիւնը ամենայն արագութեամբ Հայաստանի մէջ Քիւրտերէ և Չէրքէզներէ բաղկացեալ վեց զօրաբանակներ կազմելու վրայ է, և թէ վանի զինուորական հրամանատարը Մարթինի Հէնրի հրացաններով զինած է այդ նահանգի Քիւրտերը ուր, կըսուի թէ, այժմ տեղեւոյն ամէն կողմը շրջելու վրայ են: Եւ թէ այսպիսի լրոյ մը, եթէ ճիշդ ըլլայ, ծանրակշուութիւնը ինկատի առնելով: Կառավարութիւնը պիտի փութայ այս եղելութեանց վրայ մանրամասնութիւններ ըստանալ, եթէ չունի, առանց գործը պէտք եղածէն աւելի յապաղելու:

Սըր ձէյմս Ֆերկիդըն—Այդպիսի տեղեկութիւն մը ընդունուած չէ, բայց հարցափորձ պիտի ըլլալ թէ իրօք այդ լուրերը հիմն ունին:

Ա Ր Ա Ր Ա Տ

Կը հրատարակուի երկու շաբաթը անգամ մը, Հինգշաբթի օրերը:

Խմբագիր եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏՐԵՆՈՒ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՒԳԻՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ.)
Միացեալ Նահանգաց Համար,
Մէկ տարեկան 2 տուրք,
Կէս 1
Օտար երկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլլին,
Կէս 6

Բաժանորդացիք կանխիկ վճարելի են. և կրնան յղուիլ փոխանակագրով, Բոսթօն կամ Էքսքըքսի գերատնիս հրամանով և կամ վաւերացեալ նամակով:

Թղթակցներէ կը խնդրուի իւրեանց ստանձնած հրապարակային անուան հետ բուն անուններն ալ խմբագրութեան գրեցնել, չէ թէ հրատարակութեան, այլ փոխանութեան համար:

Ձի հրատարակուած գրութիւնք ետ չեն դարձուիր որ և է պարագայի ներքեւ:

Ուղղել ամեն գրութիւնք առ
THE ARABIAN,
No. 100 Centre Street,
NEW YORK.

ՆիՈՒԵՐՔ ԵՆ. Մարտ 12, 891.

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Յատկապէս և յատկապէս կը խնդրուի մեր այն ամէն բաժանորդներէն որք տակաւին չեն վճարած իւրեանց բաժանորդագրութեան հասցնել, կը յուսամք թէ մեր այս համեստ խնդիրը կատարել չի պիտի զլանան: «Դրամն է որ կը պատերազմի»:

Ի Ր Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը ՈՐ ԽՕՍԵՅԱՒ:

Տարակոյս չկայ որ անցեալ Շաբաթ երեկոյ Իսթըրն Սթար Յօլի մէջ հաւաքեալ Հայոց Թիւր Նիւուօրքի մէջ երէք մի տանեաց ներքեւ հաւաքեալ Հայոց Թիւն կը գերազանցէր: Միայն ԱՐԱՐԱՏն էր որ ծանոյց այդ հանգէսը:

Տ Ի Ե Զ Ե Ր Ա Կ Ա Ն ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը տեսնուի մեր այս Թերթով վերադառնալէ ետք Մ. Բօպէրդ Սթրայքի Հայկական դատին վրայ մի կարող ծօղուածը որ երեւեցաւ Բիւսմէյքըրի Փետրովարի Թուոյն մէջ և որ մեր նախորդ Թուով ծանուցած էինք:

Այս միութիւնն որոյ նպատակն է պատերազմելու չարքիքն բաւեալ աշխարհի երեսէն և պաշտպան կանգնիլ պատերազմելու անկարող կամ անզօր աղաքացիներու հարկին իրաւանց: Այսպէս իւր գրօշն պարզած է ի պաշտպանութիւն Հայկական արդար դատին, և տարակոյս չունինք որ մեր այս ճշմարտամիտ մէջ կարեւոր ձեռք մը պիտի կարենայ կառուաւել մեզ յանուն Գրիտանիոյ Թիւն և աղատ մարդկութեան:

Մեք Հայերս պարտիմք մեր եռանդն ու համակրութիւնն ցուցնել Տիւղերական Խաղաղութեան Միութեան որ հաստատուեալ Տիւղեր ունի քաղաքակրթեալ աշխարհի ամէն գլխաւոր քաղաքացի մէջ, որով պիտի կարողանամք նորա ուշադրութիւնն առաւել և ի մօտոյ գրաւել Հայ ազգի տառապեալ վիճակին վերայ և որով մեր դատին նկատմամբ արդարութեան զօրաւոր ձայն մը ևս պիտի հնչէ ներկայ ազգեակց բարձման ի նպաստ:

Մեր այս համակրութիւնն մեր տալիք ապացոյցներով պիտի կարենայ ցուցուիլ այդ Միութեան, և այս ապացոյցը կրնան արուիլ գիթ մեր գաղթականութեանց անգղիացի մասը բաժանորդ գրութիւնով Բիւսմէյքըրի որոյ տարեկան միայն մէկ տուր է, և խոստացած է իւր սրահակներն նուիրել նաեւ Հայկական խնդրոյն: Փափաքելի է նաեւ որ մեր ազգայիններն ալ տնդամակցին սոյն Միութեան ուր որ դիւրութիւն ունենան այդպէս ընելու: Բիւսմէյքըրստանալ ուղղող ազգայինք, կրնան նոյն լրտգրին անուամբ գրել ի Թիւրքիոյ և կամ գիթիւ իւր բազմութեան, որ ուրախութեամբ պիտի զրկէ իւրեանց տնունները նոյն Միութեան:

Գ Ո Ր Ե Ի Գ Ո Ր Ե Ո Ղ Ք ՏԵՍ ԱՐԱՐԱՏ ԹԻՒ Տ:

Ա.

ՀՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Անուրանալի ճշմարտութիւն մը է որ հողագործութիւնն ամէն երկրի մէջ կենսական պէտք մը կը լինէ, և չկայ ազգ մը, ժողովուրդ մը, ցեղ մը որ կարենայ առանց հողագործութեան հետեւելու իւր գոյութիւնը պահպանել: Եւ քանի որ այս արհեստը մարդկային ցեղին ամենէն կենսական մի պիտոյն լեցուցած է սկզբանէ անտի և այդպէս է այսօր, և այդպէս պիտի ըլլայ քանի որ աշխարհը կայ, ուստի իւր երջանկութիւնը փնտռող ժողովուրդ մը նախ քան զամենայն պարտի իւր մէջ այդ արհեստը զարգացնել որ հիմն է ամէն արհեստից, զբաղմանց, և քաղաքակրթութեան: Արդէն ապացուցեալ ճշմարտութիւն մը առաւել բացատրութեանց պէտք չունենալով, կանցնիմք մի քանի կարճ խօսքով ցուցնելու այն միջոցները, որչափ որ համադրուած եմք, որոնցմով Հայ գաղթականք կրնան օգտիլ այս երկրին մէջ այդ բնական արհեստէն և օգտակար ընել իրենց փորձառութիւնը աստ, կամ մայր Հայրենեաց մէջ և կամ այլ սերեր:

Այսօր Միացեալ Նահանգաց մէջ երկրագործութիւնն է որ նորա հարստութեան մեծագոյն մասը գոյացուցած է, և սոյն ժողովուրդով, ժողովրդէն

և ժողովրդին համար եղած կառավարութիւնն ամէն բանէ աւելի ամէն օր այդ Տիւղին առաւել ևս սոյն երկրին մէջ յառաջանալուն և արդիւնաւոր ըլլալուն նորանոր հնարքներ կը խորհի և նորանոր զոհողութիւններ կընէ: Ամէն կարգի գաղթականք առաւել կամ նուազ երկրին սոյն բնական շնորհքէն և կառավարութեան ընծայած դիւրութիւններէն կօգտուին: Բայց Հայերը տակաւին այդ բանին ճշակն առած չեն այդ ասպարեզը տակաւին իրենց բացուած չըլլալուն համար, և կամ գաղթականութեան փորձառու մասը աշխատաւոր դասակարգին բարձրութեան մասին մինչև հիմայ անտարբեր գտնուած ըլլալուն համար: Իրաց տեւալայն մի քանի Հայերը որք հեռաւոր Գալիֆօրնիոյ մէջ հաստատուած են և քիչ ժամանակի մէջ յաջողած ըլլալով, այսօր ինքզինքնին երջանիկ կը հրատարակեն:

Այսօր գաղթականութեան խնամակալ կամ Զբաղման Թանձնախումբ մը կրնայ ի մէջ այլոց այս կարեւոր ճիւղն ալ իւր ուշադրութեան առարկայ ընել և առիթ տալ այն կտրիճ, ու ժեղ, և գործունեայ ազգայինք, որք իւրեանց բնիկ երկրին հաւածանքներէն և հարստահարութիւններէն յուսահատած այս ծովեղբորը կը դիմեն իւրեանց վիճակը բարւոքելու, բայց իրենց խակութեան պատճառաւ, և կամ փորձառութեամբ խօսող բարեկամ մը օգտակար խորհուրդներէն զուրկ մնալուն համար, միութեան մէջ կը թշուառանան:

Թէ ինչպէս կրնայ այդ յանձնախումբը այս բանին ձեռնարկել, շատ պարզ է և ոչ ալ մեծ դրամագլխի կը կարօտի, և այդ պարզի դրամագլուրը որ պիտի կարենայ գործածուիլ այս նպատակին համար, յունայնս չոպառել ի իշատ աւէն անգամ իւր կրկնապատկէն մինչև տասնապատկէն պիտի վեղարձնէ, որ առաւել միջոց պիտի տայ այդ մարմնոյն իւր գործառնութեան դաշտն ընդարձակելու ապագային մէջ:

Այսօր զանազան Նահանգաց մէջ, նոյն իսկ այդ տեղերը գաղթումը քաջալիւրելու համար հրատարակութիւններ կը ըլլան որոց վրայ անխաղաղ կը կրնայ գաղաքար մը տալ նոյն տեղերու մէջ գետններու բարեբերութեան և արժէքին վրայօք: Անմշակ գետններ ի հարաւ կամ յարեմուտ, գրեթէ անուանական գներով և մեծամեծ զոհողութիւններով կը վաճառուին:

Ուրեմն ինչու չի կրնար ըսկընաւորութեան համար 4000 կամ 1500 տուրք գոյացուելով բարեբեր և բարեխառն կլիմայի մը մէջ մի քանի հարիւր հազար գնուիլ և գոնէ երեք կամ

չորս գործունեայ և արժանաւոր ազգայինք տրամադրութեան ներքեւ դրուիլ ինչ ինչ պայմաններով, տալով անոնց իրենց վերաբերեալ գործիքներն և փոքր դրամագլուխ մը նախնական փոխոյններէն հոգալու: Այդ երեք կամ չորս արժանաւոր և գործունեայ անձինք որք աշխատաւորներու կամ մշակներու պէտք պիտի ունենան, չէ մի որ ուրիշ ազգայիններ ալ կրնան գործածել, և որով բազմազոյն թուերու գործ հայթայթութեան կը իրաւունք տայ, և կուսանին այն արհեստը որ իւրեանց երկրին մէջ անտունիկ տանջանք մը է իսկ այս երկրին մէջ հաճոյք մը ի շնորհս ձյն մեքենական գիւրութեանց և կատարելագործութեանց, զորս նոյն իսկ Հայաստանի մէջ ներմածելը երկրին յաւիտենական բարեք մը եղած կը ըլլայ:

Արդեօք տարակոյս կայ որ այդ «էքքը» է մինչև 5 տուրքի գնուած գետնները իրենց մշակութեան առաջին տարին, կրկնապատիկ պիտի արժեն, երկրորդ տարին վերադառնալով կրկնապատիկ, երրորդ տարին վերադառնալով կրկնապատիկ մինչև որ կատարելապէս մշակուին և իւրեանց ամենաբարձր գնոյն հասնին: Արդեօք այդ յանձնախումբը տարակոյս կրնայ ունենալ որ առ առաւել 5 տարուան մէջ այս տեսակ նպատակի համար խոհապէս նախապայման գործածուի: Կրկնապատիկն ետ առնել ի իշատ նոյն հողն մշակող անձն կամ անձին ալ բաւական նիւթակաւ կարողութեան կրնայ տիրացնել որոց իւրաքանչիւրն ինքնին իւրաքանչիւր օժանդակութեան արժէք մը պիտի կարենայ ըլլալ:

Այս Տիւղին մէջ կուգայ նաեւ արշաւ հասցնելու գործը, զի երկրագործութիւն ըսելով միայն հողը հերկել չի հասկցուիր. և այս ալ կարեւոր գաղտնիք մը է այս երկրին յառաջագործութեան որ անթիւ քանակութեամբ, ինչպէս արմարէ նոյնպէս և մեղքէն կը հասցնէ աշխարհի գրեթէ ամէն շուկայներուն:

Այս մասին առաւել մանրամասնութեանց մտնել մեր այժմու նպատակը չէ, և ոչ ալ տեղի կայ: Բայց թէ գտնուի որ և է մարմին մը որ իւր գործառնութեանց իւր մի Տիւղ ընդունի այս սկզբունքը, ուրախութեամբ պիտի տամք այնպիսի փորձառութեամբ հաստատուած իրողութեանց վրայ տեղեկութիւններ որք կրնան դիւրացնել այս տեսակ նիւթական և թէ բարոյական տեսակետով իրականանալի ձեռնարկի մը յաջողութիւնը:

Եթէ ԿՈՒՋԵՔ ԱՐԱՐԱՏՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԸՆԴՈՒՆԻՒ, ՀԻՄԱՅ Է ԲԱԺԱՆՈՒ ԳՐՈՒԵԼՈՒ ԺԱՄՆԱԿԸ ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՈՐ ԱՅՍ ՄԱՍԻՆ ԵՐԿՈՒ ԽՕՍԷ ԶԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԱԼ ԶԻ ԶԱՆԱՔ:

ՔԱՅՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՍԻՆ ՈՆԱՆ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ-ԱՍՂ ՍՐԱՆԸ ԱՆՄԱՆ ԶՕՐԱՎԱՐԻՆ ՅԵՍԱԿԸ ԿԸ ԹՆԴԱՅ:

1036 վկայից նախատակութեան 1440րդ Տարեդարուն կը տօնուի:

Թո՛ղ հեթանոսը փորձեն որքեւ մեր քաջերու անմահ անունները տպեալ գրքերու մէջէն, թող յապարդիւնս ջանան մարիւ ազգային սիրոյ անխնայելի հուրը Հայ օրոտնութեան մէջէն: Բայց Հայք չի կրնար մոռնալ իւր փոխաններուն յիշատակը որք իւրեանց քաղցրիկ կեանքերը տուին պահպանելու համար այն սիրուն Հայ անունը զոր այսօր կը կրենք, և ի շնորհս որու մեզ դրացի կէս—վայրենի ցեղերու մէջէն իւր քաղաքակրթեալ և քրիստոնէայ ժողովուրդ մը աշխարհիս ամէն կողմը կը ճանցցուիմք և մեր քրիստոնէայ եղբորց համակրութիւնն կը վայելնիմք: Եթէ Հայն այսօր հեթանոսութեան բռնութեան ներքեւ չի կրնար արձակ համարձակ իւր նախնեաց անուններն փառաւորել և տօնել նոցա յիշատակները, որք դարեւ իրարմէ մեզ հասած են, պիտի դիմէ այնպիսի տեղեր և աշխարհներ ուր ունի ազատութիւն խօսելու, երգելու, քարոզելու, գործելու, և վերջապէս կատարելու այն սիրոյ պարտականութիւնները զորս բնութիւնն իւր վրայ դրած է, և որոց նուիրականութիւնը ոչ ոք կրնայ սրբել նորա սրտէն և մտքէն:

Այս բանին կատարեալ ապացոյցը եղաւ ամայս 7ին Շաբաթ գիշեր Կրեւեան Աստղ սրահին մէջ ի յիշատակ Մարտի վարդանանց նահապետութեան տրուած շքեղ երեկոյթը, որու մասնակցեցան 400է աւել քարք և կանայք, ծերք և տղայք, հայազգիք և օտարազգիք: Յիշեալ երեկոյթ սրահը որ տարիներէ ի վեր իւր Եօքրի Հայութեան վառարանն եղած է, արտաքոյ կարգի շքեղութեամբ և բարձր ճաշակու դարդարուած էր չէ թէ միայն արհեստական այլ և Հայ պատմական տեսակետով: Այսպէս որ Հայ ազգին անցեալ և ներկայ պատմութեան առաւել կամ նուազ տեղեկէր, չէր կրնար բայց իմէ խորհիլ թէ իրօք իւր մեծանուն նախահարք և ժամանակակիցը որոց միայն անունը լսած էր այժմ կեած են իրեն խօսելու եւ զինքն գիշեր մի քանի ժամեր հիւրասիրելու պէտք գային մեծ տօնին առթիւ: Սրահին դռնէն ներս մտնողին առաջին տեսնելու բանն էր գոյնգոյն գորշակներու շարք մը որոց վրայ ոսկեաւոր դրոշմուած էին Ներշապուհ Արծրունի, Արտէն Ընձայեցի, Արշակ Արշակունի, Վահան Ամատունի, Արտակ Ռշտունի, Գարեգին Սրտեմանեանց, Խորէն Խորխորունի, Շմաւոն Անձեւացի, Տաճատ Գնթունի, Հմայեալ Դիմաքսեան Հայ նախարարութեանց անունները: Իսկ սոցա կեդրոնէն սրահին արեւելեան պատին վրայ կը բարձրանար Արարատ լեռան արեւոր դաճաթը կրելով Նոյայ տապանն իւր վրայ, բարձր քան զամենայն կը տեսնուէր Մեծն Վարդանայ Մամիկոնեանի պատկերը իւր շուրջը կրելով Հայկական դրոշմին նշանական գոյները: Եւ ինչպէս անուններէն ժամանակակից կարմրախաւ ճերմակ և ի ձախին պատմական եռագոյն գոյնները:

Սրահին հիւսիսային և հարաւային կողմերը Հայ ազգանուէր գործիչներու, նահատակաց և ազգաւն մեծամեծաց անունները կրող դրոշակներով զգեստաւորուած էին: Ի մէջ այլոց կը նշմարուէին Խրիմեան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ	
Յ՝ ՈՒՍԹԸՐԻ.	
Արդիւնք Ուսթըրի մէջ կատարուած Հանգանակութեանց, վասն շինութեան Ս. Փրկիչ Եկեղեցւոյ:	
Տե՛ս Արարատ Թիւ 5.	
ՅՈՒՊԱԿ Բ.	
Փոխադրեալ գումար	692.25
Տ. Յովսէփ Մ. Վարդապետ	
Սարաճեան	50.—
Կարապետ Մ. Թաշեան	18.50
Մարտիրոս Ա. Պաղտիկեան	10.—
Գէորգ Ճղարեան	25.—
Պաղտատար Մ. Թաշեան	9.—
Յովհաննէս Եղեղեան	8.—
Մինաս Գ. Արսեան	100.—
Մարտիրոս Տոնապետեան	9.—
Յովհաննէս Մ. Գրիգորեան	10.—
Գէորգ Աւետիսեան	16.—
Գրիգոր Չէքիճեան	5.—
Մհեր. Յակոբ Մուրտեան	15.—
Գրիգոր Պաղտիկեան	5.—
Յովհան Գարեթի Մանուկեան	8.—
Սարգիս Թաշեան	25.—
Յակոբ Գոտապետեան	15.—
Գէորգ Պաղտիկեան	10.—
Աստատուր Պաղտիկեան	5.—
Սարգիս Միլիքեան	6.25
Ասրիոս Դուկասեան	5.—
Մարտիրոս Դուկասեան	5.—
Թորոս Եղիսեան	5.—
Կարապետ Նորսիկեան	5.—
Պաղտատար Պ. Պողիկեան	5.—
Թորոս Թաշեան	2.—
Կարապետ Միսեան	2.—
Սահակ Մարտիրոսեան	5.—
Մհեր. Եղիա Րատիկեան	10.—
Մհեր. Կարապետ Տր. Մկրտիչեան	8.—
Գալուստ Մհեր. Մկրտիչեան	1.—
Կարապետ Գրիգորեան	5.—
Պետրոս Դուկասեան	1.—
Գէորգ Ե. Շահինեան	1.—
Աբրահամ Թիւ. Փէնիկեան	7.—
Ստեփան Պողիկեան	2.—
Յարութիւն Պողիկեան	6.—
Մարտիրոս Սարգիսեան	5.—
Մհեր. Ալեքսան Կարապետեան	5.—
Մարտիրոս Նաճառեան	5.—
Պապա Պողոսեան	5.—
Սողոմոն Բարեղանեան	8.—
Գրիգոր Թէրեան	10.—
Յովհաննէս Բուճեան	11.90
Գէորգ Յ. Առաքելեան	5.—
Յ. և Դաւիթ Տէրունեան	6.—
Գրիգոր Գրիգորեան	7.—
Կարապետ Տիրա, ու Պապոյեան	4.—
Յակոբ Կ. Գոտապետեան	2.—
Յակոբ Յարութիւնեան	5.—
Կարապետ Շուշանեան	5.—
Պետրոս Տէր Յովհաննէսեան	5.—
Մուսէրի Մաքսուտեան	7.—
Դուկաս Բաշոյեան	5.—
Աւետիս Սողոմոնեան	1.—
Ջաւարթէրգի Կարապետեան	4.—
Մկրտիչ Դաւիթեան	5.—
Ղազար Քիւրապետեան	5.—
Ստեփան Փ. Բրուտեան	10.—
Գրիգոր Վալիկեան	10.—
Բինոս Ուրապետեան	7.—
Կարապետ Եփրեմեան	5.—
Կարապետ Ուրապետեան	2.—
Կուրդո Ուրապետեան	2.—
Պողոս Մեսրոպեան Փէրչէնցի	1.—
Յովհաննէս Վալիկեան	2.—
Օհան և Գրիգոր Կարոյեան	5.—
Ղազար Շուշանեան	15.—
Միլիքիչ Զինտեան	10.—
Ալեքսան Տր. Կարապետեան	10.—
Կարապետ Ուրապետեան	5.—
Պողոս	5.—
Ստեփան Դաւիթեան	2.—
Գումար	1511.90
(Շարունակելի)	

ՀԱՅԵՐ Ի ԹՈՒՐԿԻԱ.

Կ. Պոլիս 24 Փետր. 1890

Կարնոյ թղթակից մը կը գրէ թէ Դուռը այնչափ ազդուեցաւ Կարնոյ վիճակին վրայօք Տէյիլ Նիւզի մէջ երեցած տեղեկոյ թիւններէն որ անմիջապէս հեռագրաւ տեղեկութիւն ուղղեց Նաճառեան կառավարչէն: Վալիկի պատասխանի սոյն հեռագրին, Նաճառեան ժողովքէն ստորագրուած մագալակ մը յղեց: Անտարակոյս այս ժողովքը Թուրք կառավարութեան արքանեակներէ կաղմուած ըլլալով, բնականաբար մագալակին կառավարչին նպաստորէր էր:

Փոքր Ասիոյ զանազան կողմերը նոր ձերբակալութիւններ ըլլալով վրայ են, մասնաւորաբար Կիլիկիոյ Նաճառեան մէջ: Մարաշի բանտերը հարկւր քսան քաղաքական յանցանքով բանտարկեալ Հայեր կը պարու. նակեն, որոնց մէջ կը գտնուի Նաւ վիճակին առաջնորդը և շատ մը երեւելիներ: Ասոնք ամբաստանուած են, Չէյիլի Հայոց գէնք տուած ըլլալով յանցանքով, որք Թուրք զօրաց վրայ յարձակելով անոնց հետ պատերազմի բռնուած են: Սուլթանը ամէն Հայ բանտարկեալները արձակած ըլլալու լուրը կըսուի թէ ճիշդ չէ: Միայն 85 անձինք թողնուած են, մնացեալ անոնք 800 անձինք տակաւին բանտերու մէջ կը գտնուին իբր քաղաքական կասկածելիներ:—Տէյիլ Նիւզ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Կոստանդնուպոլսէն երեկի թուականաւ հեռագրի մը կը ծանուցանէ թէ Միացեալ Նահանգաց Պաշտօնայ Մ. Սօլոմոն Հիլը Դարն հաղորդած է պաշտօնական հրաւիրադէր մը՝ 1883ին Չիքագոյի մէջ տրուելիք աշխարհահանգէսին մասնակցելու համար: Դուռը այս բանին վրայ խորհիլ խոստացած է: Լէվլը 25 ըլլալով կը յայտարարէ թէ Սուլթանի հրամանաւ շատ մը հազուադէպ թիւքերէն մասնակցներ պիտի յղուին այդ աշխարհահանգէսին: Նաւ ձեւիւնի Մէհմեդով պաշտօնական թերթին առաջինէն մինչև ամենավերջին թիւերը, որ խիստ գեղեցիկութեամբ կազմուած պիտի ըլլայ և պիտի կրէ Օսմանեան կայսրութեան զինանշանը: Նաւ պիտի զրկուին զանազան նկարներ, կայսերական գեղարուեստից վարժարանի աշակերտներէն նկարուած:

—Գերմանիոյ Ֆրէստէրք Թագուհին որ ի Փարիզ այցելութեան վրայ կը գտնուէր, պարտաւորեցաւ փետր. 27ին Ուրբաթ օր հասնել պոլ մեկինիլ յԱնգլիա: զի ժողովրդեան զայրոյթը չարին աւելի շարժիլ սկսած էր սոյն անակնկալ այցելութիւնէն: Կրուի թէ Կայսրուհին սոյն այցելութիւնն երկու տեսակէտ ունէր: Մին՝ Պէրլինի ցուցահանգէսին համար Գաղղիացի նկարչաց զործերէն հաւաքել, մյուսն՝ Գաղղիոյ Հանրապետութեան և Գերմանիոյ միջև հարաւորութեան և Գերմանիոյ միջև սկզբնաւորութիւն մը ըլլալ: Իրողութիւնք սոյն երեւակայութեանց նպաստաւոր չեն եղած:

—Յուլիոս 31 թուականաւ Թիֆլիսէն հասած լուրերէ ցաւօք արտի կը տեղեկանամք թէ ամենայն Հայոց Հայրապետ Վեճ. ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ժանր կերպով հիւանդ է և թէ Եփրեմեան յոյսերն ին կորուսած են Նորին Վեհափառութեան առողջանալու մասին:

—Սաստիկ ձիւն տեղացած է անցեալ երկուշաբթի օր Անգլիոյ Հարաւային արևմտեան կողմերը, որուն նմանը կըսուի թէ գիտցուած չէր երկրին այդ մասաց մէջ, և կը վախճուէր որ անհուն քիչաւ հասցած է: Արջառաց կորստեան և ծովեզերքի մօտ Նաւարկութեանց լուրեր արդէն հասնիլ սկսած են:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Սր. Յովհաննէս Աստուածային պիտի ըլլայ այն Մայր-Եկեղեցւոյն անունը զոր մեր Եպիսկոպոսական եղբարք պիտի կանգնեն քաղաքիս արևմտեան կողմը Սէնթրլ Բարքի և Նորթ Բիլլըրի միջև Ութսուն և մէկերորդ փողոցի մօտ: Այս շքեղ տաճարը երկրիս եկեղեցեաց ամենէն մեծն պիտի ըլլայ եւ պիտի արժէ հինգ միլիոն տօլար: Այժմ երեք տարբեր գծագրութիւններ Պիլքը Բօլքըրի նախագահութեան ներքեւ գտնուող յանձնախումբին առջև կը գտնուին, և ասոնցմէ միոյն վրայ որոշուելուն պէս կառուցման պիտի ձեռնարկուի:

—Յառաջիկայ Մայիս 1ին հինգ տարինքէ՛ վեր տեղոյս Հայոց վառարանն եղող Արեւելեան Աստղ սրահը պիտի փոխադրուի այլ ուրեք, և շինքին այդ մասը պիտի դործածուի առեւտրական նպատակի համար: Հետեւ արար Հայկական և Գաղթականաց միութիւնը որք այժմ անդ կը հաւաքուին պիտի պարտաւորին ուրիշ սրահներու մէջ հաստատուիլ:

—Ապրիլ 27 ի Առաջ երկուշաբթի օր Արծ. Յովսէփ Մ. Վարդապետ Սարաճեան ի քաղաքս կ'ակնկալուի, և Առաջ Հինգշաբթի օր Ունիւնայի յիշատակն աստ կատարել յետոյ, պիտի մեկնի յԱւսթըր անդ գտնուելու Ս. Զատիկի օրերուն:

—Հայկական Միութիւն իւր Տարեգարծի հանգէսն պիտի տօնէ ըստ սովորականին մի շքեղ հանդիսի: Կարգադիր Յանձնախումբն այդ մասին կարգադրութեանց ձեռնարկած է արդէն:

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Մ Շ Տ Ն Ջ Ն Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Մ Ա Ն

ԱՄԱՋԻՆ ԳԱՐԱՓԱՋԸ.

Տասներեքերորդ դարու մէջ, Հօնքուր անունով Քիւմիացի ճարտարապետ մը գծագրութիւն մը թողած էր, որ իբր թէ մշտնջենական շարժման խնդիրը պիտի լուծէր, և սա բացատրութիւնն տուած: Եւ Եստ անգամ ճարտար արհեստաւորներ փորձած են անիւ մը շինել որինքն իրեն դառնայ: Ահաւասիկ այդպիսի անիւ մը շինելու կերպը, անզոյք թուով մուրճելով և կամ սնդիկով: Բայց դժբաղդաբար անիւ չէր թալան:

Այդ ժամանակէն ի վեր մշտնջենական շարժում փնտռողներ շատ եղած են, որոց շատը պատուաւոր և իմաստուն անձինք ըլլալ կարծուած են: 1860էն մինչև 1880 Անգլիոյ մէջ ութսուն և չորս դ Գաղղիոյ մէջ քսաներեք մշտնջենական շարժման մեքենայներու բախշիկ առեւտրներուն մէջ գտնուած են եպիսկոպոս մը, փիլիսոփայութեան ուսուցչական մը, լեզուագիտութեան ուսուցչական մը, երկու Պառօններ, Տաճարական Ասպետ մը, բժիշկ մը, երկու երկրաչափներ, խել մը մեքենագէտներ ևն:

ՆԱՐՏ

Հետեւեալն Արարական իսլը 25-իլանէ քաղուած է, զոր թարգմանած է Թովմաս Հայտ 1884ին: և ճիշդ բացատրութիւն մը է Արեւելքցիներու սիրելի եղած նար խաղին նկատմամբ:

«Եւ նա (խաղին հնարողը) զայն աշխարհիս օրինակին համաձայն կարգադրեց, որուն հետ բարդատեց զանի: որովհետեւ դախտակը տասներկու տուններու բաժնեց տարւոյն մէջ գտնուած ամսոյ թուոյն համեմատ, և ընկերը երեսուն հատ եւն ամսոյ մէջ գտնուած օրերուն համեմատ, և զարեբը դարձող գունտեմբու կը համապատասխանեն, և անոնց նետուածքը այս վերջիններու շարժմանը և դարձուածքին անոնց համեմատ հաւասար են քանի սր իրենց դիրքը միշտ եօթն եօթը կը կազմեն մէկը՝ վեցին, երկուք՝ հինգին և երեքը չորսին հակառակ կողմը ըլլալով: Եւ նա հաստատեց զար նետելը, որուն արդիւնքը աստուածային որոշմունքը և հրամանը օրինակ կը բերէ, որք երբեմն իրեն ի նպատակ և երբեմն իրեն հակառակ կողմէն, նա իւր նետուածքին համաձայն ինք կը շարժէ իւր ընկերը, այնպէս որ եթէ նա որամիտ է՝ կարող է ամէն բան կարգադրել որ յաղթութիւնն վաստակի և իւր հակառակորդն ընկճէ, այն պարագաներուն ներքեւ որ զարեբը որոշեցին:

«The ARARAD»

No. 100 Centre Street, New York.

ADVERTISING RATES.

Inches.	1 Month.	3 Months.	1 Year.
1	\$ 2.00	\$ 5.00	\$16.00
2	3.50	8.00	25.00
3	5.00	11.00	35.00
4	6.00	14.00	45.00
5	7.00	17.00	55.00
6	8.00	20.00	65.00
7	9.00	23.00	75.00
8	10.00	26.00	85.00
1 Col.	11.00	29.00	95.00
1 Col.	20.00	55.00	180.00

Per Line (Agate) 15 cents each issue.

The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

If you wish to Advertise Anything Anywhere at Any time

WRITE TO

GEO. P. ROWELL & Co.

No. 10 Spruce Street, NEW YORK.

Ս. ՕՂՆՆԵՍԵԱՆ.

Արեւելեան և Տեղական Նպարեղէններ.

59 Ուաշինգթօն և 216 Էլտրիճ Փողոցը.

Սոյն Խանութներու մէջ կը վաճառուի մասնաւոր խնամք Կ. Պոլսէ բերուած Արեւելեան ամէն տեսակ Նպարեղէնք, Աղձեղէններ, ընտիր Պտուղներ, Ամերիկացոց ախորժիկ ու նուէրի արժանի Անուշեղէնք, զանազան ընտիր գինիներ ու օղիներ, նաեւ Տաճկական Գաղղիացի առաջին կարգի ծխախոտէ շինուած սիկարէղներ:

Յանձնարարութիւնք ժամանակին խնամք կը կատարուին, և յաճախորդներն գոհացնելու համար ամէն ջանք ի դործ կը դրուին:

Mrs. Winslow's Soothing Syrup.

ՏԻԿ. ՈՒՆԻՋԻՆՈՒ ՈՂՈՐԴ ՕՇԱՐԱԿԸ.

Յիսուն տարինքէ աւելի է որ Տիկին Ունիւն Ուրբիշ Օշարակը միլիոնաւոր մայրերէ կը գործածուի իրենց զաւակաց ախորժիկ անեղ ժամանակ: Գինիները կը խանգարուի և հանգստութիւնները կը վերականգնուի անոնց հանելու ցաւէ հիւանդ, տառապող և լացող զաւակէ մը: Եթէ այդպէս է, անմիջապէս Անուշեղէն Մանուկաց համար «Տիկին Ունիւն» Ողորդ Օշարակ օգէն շիւ մը առէք: Սորա արժէքը անհամար է: Խեղճ պրօքտոր տառապեալին անմիջապէս դարման մը պիտի ըլլայ: Մայրեր, աստոր վրայ կրնաք ապաւինիլ ընտիր սիրալ չի կայ: Կը բժշկէ Փորթուծութիւն, կը կանխուարէ Ստամոքսը և Աղիները, կը բժշկէ Աղեաց Խիթը, կը կաղցնէ Լիւնները, կը նորոգեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմուածքը կը կազդուի և կը զօրացունէ: Անուշեղէն մանուկաց համար «Տիկին Ունիւն» Ողորդ Օշարակը, ճարտար-հասկեր, և Միացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկութիւն և անուշեղէններէն մէկուն գեղազիւն է, և կը ծախուի աշխարհիս ամէն դեղագործներու քով: Իւրաքանչիւր չի-չի գինն է քան և հինգ անկէ՛ խեղճեք միայն:

« Mrs. Winslow's Soothing Syrup. »

ՆԱԳ

Հ. ԷԿԻՆԵԱՆ, Հայերէն միակ

Տպագրիչ Միացեալ Նահանգս, պատիւ ունի ծանուցանել թէ յանձն կ'առնէ տպագրել ամէն տեսակ Հայերէն և Անգլ. գործ մեծ կամ փոքր քանակութեամբ: Եւ կամ փոքր քանակութեամբ տպագրութեան մարտնչութիւնն ևն

«The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.»

Տպագրութեան մարտնչութիւնն ևն ամենաթիւն կարիքի չէ գերազանցել: Իր նիւ Եւրոպի մէջ ձուլել տուած հայերէն ընտիր տառերն բաւական են մեծ կամ հաստիւն տպագրելու: Գիրք, տետր կամ ո՛ր է տպագրելի բան ունեցող ազգայնաց ուշադրութիւնն կը հրաւիրուի այս մասին:

B. H. TASHJIAN & Co., 100 Centre St., New York

BOOK AND PAMPHLET BINDERS

CLOTH & PAPER FINDINGS, MAGAZINES,

Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnished cheerfully.

—ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ի Հ. ԷԿԻՆԵԱՆ—